1.ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄԱՐԴԱՀԱՄԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1. BRIEF HISTRICAL REVIEW OF THE CENSUSES CONDUCTED PREVIOUSLY IN ARMENIA

1. КРАТКИЙ ИСТОРИЧЕСКИЙ ОЧЕРК О ПРОВЕДЕННЫХ В АРМЕНИИ ПЕРЕПИСЯХ НАСЕЛЕНИЯ

Հայ ժողովրդի թվաքանակի վերաբերյալ քիչ թե շատ արժանահավատ տվյալները վերաբերում են մ.թ.ա. առաջին դարի կեսերին՝ Տիգրան Մեծ-ի գահակալության տարիներին: Հայ մատենագրությունը հավաստում է, որ բուն պատմական Հայաստանի տարածքում ապրող անդրենածին բնակչության՝ հայերի թվաքանակը կազմում էր մոտավորապես 5-6 միլիոն մարդ: Արևելյան Հայաստանի բնակչության թվաքանակի վերաբերյալ առաջին ժողովրդագրական տվյալները վերաբերում են 1828թ-ին: Մոտավոր գնահատումներով, Ռուսաստանի կազմի մեջ մտած հայկական տարածքների՝ Երևանի ու Նախիջևանի խանությունների բնակչությունը կազմել էր 160 հազար մարդ:

1897թ. ռուս աշխարհագրագետ, վիճակագիր Պ.Պ.Սեմյոնով-Տյան-Շանսկու նախաձեռնությամբ, անցկացվեց ռուսական կայսրության առաջին և միակ համընդհանուր մարդահամարը: Այս մարդահամարն ընդգրկեց նաև Հայաստանի այն տարածքը, որը մտնում էր Ռուսաստանի կազմի մեջ, սակայն, ինչպես ռուսական ողջ կայսրության սահմաններում, այնպես էլ բուն հայկական տարածքներում բնակվող հայերի թվաքանակի վերաբերյալ սպառիչ տեղեկություններ չարձանագրվեցին: Երևանի նահանգին վերաբերող տվյալների համաձայն՝ նրա տարածքում ապրում էր 900 հազար մարդ:

Հայաստանում առաջին մարդա-համարն անցկացվել է նախկին ՍՍՀՄ կազմում 1926թ.՝ ընդգրկելով հանրապետության ողջ տարածքը: Այն իրականացվել է ականավոր վիճակագիրներ Վ.Գ. Միխայլովսկու և Օ. Ա. Կվիտկինի մշակած գիտական մեթոդներով, որոնք էլ հիմք հանդիսացան նաև հաջորդ մարդահամարների անցկացման համար: Բնակչության հաշվառման միավորը՝ ընտանիքն էր, որի

More-or-less reliable information concerning the Armenian population belongs to the middle of the first century BC, during the years of Tigran Mets throne. The Armenian chronicle shows, that the number of native Armenian people, living in the territory of historical Armenia, comprised approximately 5-6 million people. The first demographic data about the population of Eastern Armenia dates to 1828. By approximate estimations, the population of Armenian territories of Yerevan and Idjevan Khans within the structure of Russia was 160 000 people.

In 1897, the Russian geographer and statistician P. P. Semyonov-Tyan-Shanski organized the first and only overall Population Census of the Russian Empire. The territory of Armenia located within Russian Empire was included in this census, though information about the number of ethnic Armenians within Russia(and hence Armenia as well)was not collected. According to this census 900 000 people lived within Yerevan.

In 1926 the first Census was undertaken within the structure of former Soviet Union . It was accomplished using the methods designed by famous statisticians Michaylovski and Kwitkin, which became the basis for conducting all future censuses.The unit of population count for this census was the family, and comprehensive and detailed data for family structure was obtained .

On 1926 December 17th, the de facto population in Armenia was 881,290 persons. The next census was undertaken in 1937. However to prevent disclosure of the number of people who died during the years of famine and repression of Stalin's era, or millions of people in concenconcen tration camps, these results were never processed .

Более ли менее достоверные данные о численности армянского народа относят к половине первого века д.н.э., в годы царствования Тиграна Великого. Армянская летопись заверяет, что среди коренного населения , проживающего на исконно-исторической территории Армении, численность армян составляла приблизительно 5-6 милионов человек. Первые этнографические данные о численности населения Восточной Армении относят к 1828году. По приблизительным оценкам, население армянских территорий, входящих в состав России, Ереванского и Нахичеванского ханств составляло 160 тысяч человек.

В 1897 году, по инициативе русского географа, статистика П.П. Семенова-Тянь-Шанского, была проведена первая и единственная всеобщая перепись населения российской империи. Эта перепись включила в себя также ту территорию Армении, которая входила в состав России, однако, исчерпывающие данные о численности армян, проживающих как на исконно армянских территориях, так и в пределах границ российской империи, не были зарегистррованы. Согласно данным, относящимся к Ереванской губернии, на его территории проживало 900 тысяч человек

Первая перепись населения в Армении, охватывающая всю территорию, была проведена в составе бывшего СССР в 1926 году. Она осуществилась по обработанным научным методам выдающихся статистиков В.Г. Михайловского и О.А. Квиткина, которые стали основой для проведения последующих переписей населения. Единицей учета населения являлась семья, о строении которой впервые были

կառուցվածքի վերաբերյալ առաջին անգամ ստացվեցին մանրամասն տվյալներ: 1926թ. դեկտեմբերի 17-ի դրությամբ Հայաստանի առկա բնակչության թվաքանակի ցուցանիշը կազմել էր 881290 մարդ: Հաջորդ մարդահամարն անցկացվել է 1937 թվականին: Սովի և ստալինյան բռնարարքների հետևանքով զոհված, ինչպես նաև համակենտրոնացման ճամբարներում գտնվող միլիոնավոր մարդկանց հաշվառումը քողարկելու նպատակով մարդահամարի տվյալները խեղաթյուրված ու կեղծված էին, ուստի դրանք չեն մշակվել ու ամփոփվել: 1939թ. անցկացվեց հաջորդ մարդահամարը, որի ժամանակ առաջին անգամ հատուկ մեթոդաբանությամբ կիրառվեց նաև բնակչության հաշվառման ճշգրտության ու ամբողջականության հետմարդահամարային վերահսկողությունը: Այս մարդահամարի ժամանակ, բացի առկա բնակչությունից, հաշվառվեց նաև մշտական բնակչությունը: Սակայն, երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով հնարավոր չեղավ ավարտին հասցնել հավաքագրված նյութերի ամբողջական մշակումը, իսկ ստացված տվյալները համառոտ հրապարակվեցին 1939-1940թթ: 1939թ. հունվարի 17-ի դրությամբ Հայաստանի առկա բնակչության թվաքանակի ցուցանիշը կազմել էր 1282338 մարդ:1959թ. հունվարին անցկացվեց հաջորդ՝ հետպատերազմյան առաջին մարդահամարը: Տեղեկությունների հավաքագրման մեթոդաբանությունն ու մարդահամարի ծրագիրը, նախորդ մարդահամարների հետ համեմատած, գրեթե նույնն էին: 1959թ. մարդահամարի անցկացումը հնարավորություն տվեց վեր հանելու երկրորդ աշխարհամարտի մարդկային ռեսուրսներին պատճառած վնասների չափերը, ինչպես նաև դրանց հետևանքով երկրի սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշները բնութագրող տվյալները: Մարդահամարի տվյալները հանդիսացան տնտեսության պլանավորման, կառավարման և բնակչության ընթացիկ և հեռանկարային թվաքանակի հետագա հաշվարկների հիմքը: 1959թ. հունվարի 15-ի դրությամբ Հայաստանում առկա բնակչության թվաքանակի ցուցանիշը կազմել էր 1763048 մարդ, իսկ մշտական բնակչությանը՝ 1765297:

Two years later, in 1939 , another Census was attempted. For the first time special methodology was implemented to conduct post-census observation in an effort to gauge the accuracy and completeness of the count. In addition to the de facto population, the de jure population was estimated, as well. However, due to the Second World War, it became impossible to conclude the data processing and only summary results were publicated in 1939-1940 . The de facto population number of Armenia, as of January 17, 1939 was 1,282,338 people.

The next Census was not conducted until January,1959 , 14 years after the War II and 20 years since the last census. The program of the Census and the method of data collection were almost the same as compared with the previous ones. It was the first opportunity to estimate the losses of human resources and the socio-demographic changes inflicted by the World War II. The data of this census became the basis for planing and management of the economy, as well as for estimation of population current and projected counts. As of January the 15th, 1959 the de facto population of Armenia was 1,763,048 persons, and the de jure population – 1,765,297.

The next was the Census of 1970. At that time the sample method of questionning was used. Among the 18 questions of the program, the information concerning the eleven was collected from the whole population(complete count), and concerning the 7 questions – from the 25 percent of the de jure population(sample count). New questions, particularly about knowledge of native language and the second language were included in the program of Census. The other advantage was that some technical innovations of data processing had been used during that Census.

As of 15th January ,1970 the de facto population number in Armenia comprised 2491873, and the de jure– 2492616 pers.

The next Census was taken in 1979, January, during which the posi-

получены подробные данные. По состоянию на 17-ое декабря 1926г., показатель численности наличного населения составил 881290 человек. Следующая перепись населения была проведена в 1937году. С целью маскировки учета милионов людей, находившихся в концетрационных лагерях, а также погибших вследствии сталинских репрессий и голода, данные о переписи населения были сфальсифицированны, и соответственно не были обработанны и подытожены.

В 1939 году была проведена следующая перепись, во время которой впервые при помощи специальной методологии был применен пост переписной контроль за целостностью и точностью учета населения. Во время этой переписи, кроме присутствующего населения, было учтено также постоянное население. Однако вследствии Второй Мировой Войны не удалось довести до конца целостную обработку собранных материалов, а полученные данные были вкратце опубликованы в 1939-1940гг. По состоянию на 17 января 1939года показатель численности наличного населения Армении составил 1282338 человек. В январе 1959 года была проведена первая послевоенная перепись населения. Методология сбора информации и программа переписи, по сравнению с прошедшими, была почти та же. Проведенная в 1959 году перепись населения дала возможность выявления размеров ущерба, нанесенного человеческим ресурсам Второй Мировой Войной, а также данных, характеризующих социально-демографические показатели. Данные о переписи населения стали основой для дальнейших расчетов текущей и перспективной численности населения, управления, а также для планирования экономики. По состоянию на 15-ое января 1959года показатель численности наличного населения в Армении составил 1763048 человек, а постоянного населения-1765297 человек

Следующей была перепись населения 1970 года. В это время был применен выборочный метод опроса.

Данные об 11-и из 18-и вопросов программы, были собраны

1. Հայաստանում անցկացված մարդահամարների համառոտ պատմական ակնարկ- *Brief historical review of the censuses conducted previously in Armenia-*

Краткий исторический очерк о проведенных в Армении переписях населения

Հաջորդը՝ 1970թ. մարդահամարն էր: Այդ ժամանակ կիրառվեց հարցման ընտրանքային մեթոդը: Ծրագրի 18 հարցերից 11-ի վերաբերյալ տեղեկությունները հավաքագրվեց ողջ բնակչությունից (համատարած հաշվառում), իսկ 7 հարցերի վերաբերյալ՝ մշտական բնակչության 25 տոկոսից (ընտրանքային հաշվառում): Մարդահամարի ծրագրում ներառվեցին նոր հարցեր, մասնավորապես մայրենի լեզվի և այն լեզվի վերաբերյալ, որին հարցվողն ազատ տիրապետում էր (երկրորդ լեզու):

Մյուս առանձնահատկությունն էլ այն էր, որ այդ մարդահամարի ժամանակ կիրառված հարցաթերթերը հարմարեցվել էին էլեկտրոնային սարքերի կողմից ընթերցվելուն:

1970թ. հունվարի 15-ի դրությամբ Հայաստանում առկա բնակչության թվաքանակի ցուցանիշը կազմել էր 2491873 մարդ, իսկ մշտականը՝ 2492616 մարդ:

Հաջորդ մարդահամարն անցկացվեց 1979թ. հունվարին, որի ժամանակ օգտագործվեց նախորդ մարդահամարների դրական փորձը, սակայն նյութերի մշակման մեթոդներն էապես տարբերվեցին նախորդներից:

Այդ մարդահամարի ժամանակ ՍՍՀՄ վիճակագրական պրակտիկայում առաջին անգամ մարդահամարի հարցաթերթում տեղ գտած գրանցումները հատուկ կարդացող սարքերի օգնությամբ մուտքագրվեցին և գրանցվեցին էլեկտրոնային հաշվիչ մեքենաների մագնիսական ժապավենների վրա: Մարդահամարի ծրագրում ավելացվեցին նոր հարցեր, իսկ հարցերի մի մասն էլ վերախմբագրվեցին:

1979թ. հունվարի 17-ի դրությամբ Հայաստանում առկա բնակչության թվաքանակի ցուցանիշը կազմել էր 3030747, իսկ մշտական բնակչության թվաքանակինը՝ 3037259 մարդ:

1989թ. տեղի ունեցավ Խորհրդային Միության վերջին մարդահամարը, 1988թ. դեկտեմբերյան աղետալի երկրաշարժից ընդամենը մեկ ամիս անց՝ բնակչության հսկայական զանգվածների տեղաշարժի և ղարաբաղյան հակամարտության հետևանքով հանրապետությունում ստեղծված քաղաքական և տնտեսական ան կայունության պայմաններում: Չնայած 1990թ. մայիսին տպագրվեցին նյութերի մշակման արդյունքները, այնուամենայնիվ, հատկապես փախստականների և տեղահանվածների

tive experience of the previous Censuses had been used, though the methods of data processing were essentially different form the previous ones.

During that Census, for the first time in the statistical practice of the Soviet Union,by the help of special reader equipments the information from the Census questionnaires had been entered into the electronic computers and afterwards registered on the magnetic tapes.

In the program of the Census new question were added, and a part of the questions were reedited.

As of January 17, 1979 the de facto population in Armenia was 3,030,747, and the de jure population was 3,037,259 persons.

The last census of the Soviet Union took place in January 1989, a month later after the disastrous earthquake in northern Armenia,and within an environment of political and economic unstablity caused by enormous population movements due to the conflict in Gharabagh, as well. For example, as a result of the earthquake, more than 160,000 people were evacuated outside Armenia via official channels, though others left of their own volition, so that an exact estimate of the number of displaced individuals due to the earthquake was impossible to ascertain. In addition, due to the conflict in Karabagh, ethnic Armenians were returning to Armenia from Azerbaighan, and ethnic Azerbaighanis resident in Armenia were returning to Azerbaighan. All of these factors negatively influenced the results of the census such that they did not reflect the real picture of Armenia

Though the census results were published in May 1990, they very quickly lost their relevance due to the problems outlined above. Nevertheless, as of January 12, 1989, the de facto population was 3,287,677, and the de jure population was 3,304,776.

со всего населения (сплошной учет), а о 7-и вопросах – с 25 процентов (выборочный учет). В программу переписи были включены новые вопросы, в частности о родном языке и о том, которым свободно владел опрашиваемый (второй язык). Другой особенностью было то, что переписные листы, примененные во время этой переписи , были приспособлены для чтения при помощи электронных устройств.

По состсянию на 15 января 1970 года, показатель численности наличного населения Армении составил 2491873 человек, а постоянного- 2492616 человек.

Следующая перепись населения была проведена в январе 1979 года, во время которой был использован положительный опыт предыдущих переписей, однако методы обработки материалов значительно отличились от предыдущих

Во время этой переписи населения, впервые в статистической практике СССР записи, сделанные в переписных листах , при помощи специальных считывающих устройств были введены и записанны на магнитную ленту электронно-вычислительных машин. В программу переписи были добавлены новые вопросы, а часть вопросов перередактированны.

По состоянию на 17 января 1979 года показатель численности наличного населения составил 3030747 человек, а постоянного- 3037259 человек.

В 1989 году, спустя один месяц после декабрьского разрушительного землятрясения 1988 года, в условиях экономической и политической нестабильности, порожденной вследствии передвижения огромных масс населения и карабахского противостояния, была проведена последняя перепись населения СССР. Несмотря на то, что в мае 1990 года были напечатанны результаты обработки материалов, все таки вследствии методологического несоответствия межреспубликанского обмена и учета информации особенно о беженцах и выселенных, в 1989 году результаты переписи очень быстро потеряли свою актуальность. Во время этой переписи населения также, дан-

վերաբերյալ տեղեկատվության միջհանրապետական հաշվառման և փոխանակման մեթոդաբանական անհամապատասխանության հետևանքով, 1989թ. մարդահամարի արդյունքները շատ շուտ կորցրեցին իրենց արդիականությունը: Այդ մարդահամարի ժամանակ ևս տեղեկությունները ստացվեցին բնակչության երկու կատեգորիաների վերաբերյալ՝ մշտական և առկա: 1989թ. հունվարի 12-ի դրությամբ Հայաստանի առկա բնակչության թվաքանակի ցուցանիշը կազմել էր 3287677, իսկ մշտականինը՝ 3304776 մարդ, սակայն մարդահամարի պահին ավելի քան 160 հազար մարդ էվակուացվել էին հանրապետության սահմաններից դուրս, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը հնարավոր չեղավ ամբողջությամբ ներառել հանրապետության առկա բնակչության թվաքանակի ցուցանիշում, իսկ դրանց կեսից ավելին՝ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշում, քանի որ ըստ ԽՍՀՄ վիճակագրության կողմից սահմանված մեթոդաբանության, նրանց վերաբերյալ չստացվեցին մարդահամարի հարցաթերթի երկրորդ օրինակները: Այդ ամենը զգալիորեն անդրադարձան մարդահամարի արդյունքների վրա, և մարդահամարի արդյունքով ստացված բնակչության թվաքանակի ցուցանիշները, ցավոք, չարտացոլեցին դրանց իրական պատկերը:

рий населения-постоянного и наличного. По состоянию на 12 января 1989 года, показатель численности наличного населения составил 3287677 человек, а постоянного-3304776 человек. Однако в момент переписи более чем 160 тысяч человек были эвакуированны за пределы республики, из-за чего полностью включение информации о них в показатель численности наличного населения республики, а больше половины их в показатель численности постоянного населения, стало невозможным, т.к. по методологии, установленной Госкомстатом СССР, касающиеся их вторые экземпляры переписных листов не были полученны. Все это существенно повлияло на итоги переписи, и показатели численности населения, полученные в результате переписи населения, к сожалению, не отразили их реальную картину.

2. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

REASONS FOR THE CENSUS AND ITS LEGAL BASIS WITHIN THE REPUBLIC OF ARMENIA

НЕОБХОДИМОСТЬ ПРОВЕДЕНИЯ ПЕРЕПИСИ НАСЕЛЕНИЯ И ОБЕСПЕЧЕНИЕ ЕГО ПРАВОВОГО ПОЛЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Արդի աշխարհում ցանկացած երկիր, որպես այդպիսին, անկախ իր հասարակարգի և մասնավորապես տնտեսակարգի առանձնահատկություններից, դատապարտված է պարբերաբար մարդահամարներ անցկացնելու: Այդ են վկայում նաև ՄԱԿ-ի հազարամյակի հանձնարարականները:

Հայաստանի Հանրապետության համար մարդահամարի անցկացումը նաև ժամանակի հրամայական էր, քանի որ.

- նախորդ, 1989 թ. մարդահամարի տվյալները, ինչպես վերը նշվեց, շատ շուտ դուրս եկան շրջանառությունից, 10 տարին մեկ անցկացվող մարդահամարների հաջորդականությունը խախտվել էր, և բնակչության ընթացիկ հաշվառումը վարվում էր 22 տարվա վաղեմություն ունեցող 1979թ. մարդա-համարի տվյալների հիմքով,
- ազատական տնտեսակարգին անցնելու շրջանում Հայաստանում տեղի էին ունեցել քաղաքական, տնտեսական ու սոցիալական խոր վերափոխումներ, և այդ գործընթացները վերլուծելու, գնահատելու և կառավարելու համար պահանջվում էր ճշգրիտ և հավաստի տեղեկատվություն բնակչության թվաքանակի, աշխարհագրական տեղաբաշխման, նրա սոցիալ-ժողովրդագրական, զբաղվածության (տնտեսական ակտիվության), տնային տնտեսությունների բնակության պայմանների և այլ բնութագրերի վերաբերյալ,
- բնակչության վերաբերյալ վերը նշված կտրվածքներով ու հատկանիշներով ամբողջական տեղեկություններ ստացվում են միայն մարդահամարների անցկացման արդյունքում:

Մարդահամարի նախապատրաստման և անցկացման համար տեխնիկական և մեթոդաբանական օգնություն ստանալու նպատակով ՀՀ

Nowadays, any country is required to conduct a census regularly, regardless of the economic or social standing of its population. The millennium recommendations of the UN testify as much.

For theRepublic of Armenia the undertaking of the census was also an issue of time:

· The 1989 census results, as stated above, very rapidly became worthless. The order of the census conduction regularly taken every ten year had been disturbed, and current population estimations were being based on the census results from 1979, held 22 years ago.

- Since the last census a more open economy had arisen in Armenia, influencing political, social, and economic decisions. In order to better discuss, estimate, and govern these changes an exact and comprehensive picture of Armenia was required, addressing such basic concerns as its population size, geographic distribution, socio-demographic characteristics, economic activities, and household conditions.

- Complete information about a population with all its distributions and characteristics are only known as a result of condcuting a census.

In order to obtain technical and methodological assistance for preparing and conducting a census, the RA's National Statistical Service turned to Eurostat.

Since 1995, a cooperative program "census organization and conduction" was established with the Northern Ireland NI-CO consulting service experts, in the context of TACIS technical assistance programme which was continued up to 2002.

В современном мире, любая страна, как таковая, независимо от особенностей его общественного строя и, в частности, экономического строя, приговорена на периодическое проведение переписей населения. Об этом свидетельствуют диррективы тысячалетия ООН.

Для Республики Армения, проведение переписи населения явилось также повелением времени, так как:

· Данные предыдущей переписи, проведенной в 1989году, как уже указывалось выше, очень быстро вышли из оборота, была нарушена последовательность проведения раз в 10 лет переписи населения, и текущий учет населения велся на основании данных 22 летней давности, проведенной в 1979 году переписи населения;

· В период перехода к свободному экономическому строю, в Армении произошли политические, глубокие экономические и социальные перемены, и для анализа, оценки и управления этими процессами требовалось точная и достоверная информация о численности населения, географическом распределении, занятости (экономической активности), условиях проживания домовых хозяйств, его социально-демографическом и других характеристиках;

· Целостная информация по вышеуказанным аспектам получается только в результате проведения переписи населения.

С целью получения методологической и технической помощи для подготовки и проведения переписи населения, Национальная статистическая служба РА обратилось к статистической службе Евросоюза (Евростат).

В рамках программы технической помощи TACIS , которая предоставляется странам бывшего СССР со стороны Евростата, с 1995 года, при участии экспертов Северно Ирландской компании NI-CO было

Ազգային վիճակագրական ծառայությունը դիմեց եվրամիության վիճակագրական ծառայությանը (Եվրոստատ):

Եվրոստատի կողմից նախկին ԽՍՀՄ-ի երկրներին ցույց տրվող TACIS տեխնիկական օգնության ծրագրի շրջանակներում՝ 1995 թվականից սկիզբ դրվեց Հյուսիսային Իռլանդիայի NI-CO կազմակերպության փորձագետների մասնակցությամբ՝ «Մարդահամարի կազմակերպում և անցկացում» համագործակցության համատեղ ծրագրին, որը շարունակվեց մինչև 2002 թվականը:

ՀՀ կառավարության 1995թ. հունվարի 11-ի թիվ 6 որոշումով սահմանվեց, որ 1999 թվականին Հայաստանի Հանրապետությունում պետք է անցկացվի հերթական մարդահամար:

Դրա նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման գործընթացները իրականացնելու համար 1997թ. մայիսին ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կազմում կազմավորվեց հատուկ աշխատանքային ստորաբաժանում՝ մարդահամարի վարչություն 5 բաժիններով.

1. Պլանավորման և ծրագրա-մեթոդաբանական
2. Կազմակերպչական
3. Մեքենայական ծրագրերի և տեխնոլոգիաների
4. Տեխնիկական նախագծերի մշակման
5. Վարչատնտեսական

Հաշվի առնելով վերոհիշյալը, ինչպես նաև առնվազն տասնամյակը մեկ մարդահամար անցկացնելու նախկին փորձն ու միջազգային առաջարկությունները՝ ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց 1999թ. անցկացնել հերթական մարդահամար: Դրա անցկացման մեթոդաբանությունն ու կազմակերպման գործընթացները, հրահանգչական փաստաթղթերը, ինչպես նաև կոդավորման և մեքենայական մշակման տեխնոլոգիական գործընթացները փորձարկելու նպատակով 1997թ. նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 3-ն անցկացվեց փորձնական մարդահամար: Սակայն ՀՀ պետական բյուջեի միջոցների սղությամբ պայմանավորված՝ ՀՀ կառավարության 1998 թ. դեկտեմբերի 3-ի թիվ 761 որոշմամբ մարդահամարի անցկացման ժամկետը հետաձգվեց:

By the decision N6, made by the government of RA on January 11, 1995, it was decided that in 1999 in the Republic of Armenia the next census should be conducted.

For its preparations, undertaking and processing of materials, in 1997 May, in the RA National Statistical Service, a special working subdivision was created - Census Department with the 5 divisions:

1. Planning and program-methodology
2. Organizational
3. Software and technologies
4. Technical projects development
5. Administrative.

In order to test the methodology of its conduction and organizational processes, the instructive materials, as well as coding and technological processes, in 1997 from November 26th until December 3rd a Pilot Census was conducted. But the term of the census was postponed by the decision 761 in 1998 December the 3rd made by the RA Government, due to the shortagages within the State budget.

In 1999 October the Parliament passed an RA law "On Census", according to which "The first Census in the Republic of Armenia will be undertaken in 2001", and by the 78th decision passed in 2000 February the 19th, the term of that Census conduction had been defined from 10 till 19 of October, 2001, and its Pilot Census term – the September 6-15th 2000.

поставлено начало совместной программы сотрудничества "Организация и проведение переписи населения ",которая продлилась до 2002 года.

Постановлением номер 6 правительства РА от 11 января 1995 года было решено, что в 1999 году в Республике Армения должна провестись очередная перепись населения. Для осуществления ее подготовки, проведения и обработки информации, в мае 1997 года в составе Национальной статистической службы сформировалось особое рабочее подразделение с пятью отделами управления переписи населения:

1. Планирования и программно-методологический;
2. Организационный;
3. Технологий и машинных программ;
4. Обработки технических проектов;
5. Административно-хозяйственный.

Учитывая вышеуказанное, а также международные предложения и прежний опыт проведения переписи как минимум раз в десять лет, правительство РА приняло постановление в 1999 году провести перепись Населения. С целью испытания методологических и организационных процессов, указательных документов, а также технологических процессов машинной обработки и кодировки ее проведения, с 26-го ноября по 3-е декабря 1997 года была проведена пробная перепись населения. Однако из-за скудности средств государственного бюджета РА, постановлением номер 761 правительства РА от 3-го декабря 1998 года, сроки проведения переписи населения были отложены.

Для обеспечения правово-го поля проведения переписи, Национальное Собрание РА, в октябре1999 года, приняло закон РА "О переписи населения", согласно которому: "Первая перепись населения в Республике Армения будет проведена в 2001 году", а согласно постановлению номер 78 правительства РА от 19-го февраля 2000 года, срок ее проведения был установлен с 10-19-е октября 2001 года, а срок проведения предшествующей ей пробной переписи-с 6-15-ое сентября 2000 года

Մարդահամարի անցկացման իրավական դաշտն ապահովելու համար ՀՀ Ազգային ժողովը 1999թ. հոկտեմբերին ընդունեց «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի. «Հայաստանի Հանրապետությունում առաջին մարդահամարն անցկացվելու է 2001թվականին», իսկ ՀՀ կառավարության 2000թ. փետրվարի 19-ի թիվ 78 որոշմամբ դրա անցկացման ժամկետը սահմանվել է 2001թ. հոկտեմբերի 10-19-ը, իսկ դրան նախորդող փորձնական մարդահա-մարի անցկացման ժամկետը՝ 2000թ. սեպտեմբերի 6-ից 15-ը ներառյալ:

3. ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐՆԵՐԸ
THE PILOT CENSUS
ПРОБНЫЕ ПЕРЕПИСИ НАСЕЛЕНИЯ

Մարդահամարի անցկացման մեթոդաբանական, կազմակերպչական և նյութերի մեքենայական մշակման ծրագրերի ու տեխնոլոգիաների փորձարկումն իրականացվում է փորձնական մարդահամարի անցկացման միջոցով, որն ընդգրկում է երկրի բնակչության ոչ պակաս, քան մեկ տոկոսը:

Testing of the methodological, organizational and data processing technologies and programming is realized through the pilot census, which includes not less than one percent of the country's population.

Испытание методологической, организационной и механической обработки материалов, программ и технологий переписи населения осуществляется способом проведения пробного переписи населения, которая охватывает неменее одного процента населения.

3.1. 1997թ. ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ
1997 PILOT CENSUS
ПРОБНАЯ ПЕРЕПИСЬ НАСЕЛЕНИЯ 1997г.

1997թ. փորձնական մարդահամարի կազմակերպական աշխատանքները սկսվեցին մարդահամարի ծրագրի (հարցաշարի) կազմման նախապատրաստումից: 1997թ. փորձնական մարդահամարն անցկացվեց նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 3-ը Հայաստանի Հանրապետության հետևյալ բնակավայրերում՝

ա) Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն թաղային համայնքի մի մասում (շուրջ 10,0 հազ. բնակիչ),

բ) Արարատի մարզի Վեդի քաղաքում և Ազատավան, Արալեզ, Դալար, Փոքր Վեդի, Ձորակ գյուղերում (շուրջ 28,2 հազ.բնակիչ):

Works of the Pilot Census in 1997 started by preparation of the Census the questionnare. It was conducted from November 23rd to December the 3rd, 1997 in the following settlements of the Republic of Armenia.

a. a part of Kanaker-Zeitun quarter of city Yerevan (about 10,000 persons)

b. city Vedi and Azatavan, Aralez, Dalar, Pokr Vedi, Dzorak villages of Ararat Marz (about 28,200 persons)

First of all the schematic plans of Kanaker- Zeytun quarter and city Vedi were received (for the making lists of houses) to get ready for Pilot Census. Eleven registrars were involved in these works. During this, the correction of schematic plans were done, as well.

Работа по организации пробной переписи 1997г. началась с подготовки программ (вопросника) переписи населения. Пробная перепись 1997г. была проведена с 26 ноября по 3 декабря в следующих населенных пунктах Республики Армения.

а. В одной части муниципальной общины Канакер-Зейтун гор. Еревана (около 10тыс жителей).

б. В г. Веди и селах Азатаван, Аралез, Далар, Покр Веди, Дзорак Араратского марза (около 28.2тыс. жителей).

Для организации очередной работы был заключен договор с государственным предприятием “Армгеодезия” о составлении плана

Հերթական մարդահամարի աշխատանքները կազմակերպելու համար «Հայգեոդեզիա» պետական ձեռնարկության հետ կնքվեց պայմանագիր քաղաքների ու խոշոր գյուղերի (5000 և ավելի բնակչությամբ) սխեմատիկ հատակագծերի և մարզերի ու շրջանների քարտեզների պատրաստման համար: Փորձնական մարդահամարին նախապատրաստվելու համար առաջին հերթին ստացվեցին Երևանի Քանաքեռ-Զեյթուն թաղային համայնքի և Վեդի քաղաքի սխեմատիկ հատակագծերը՝ տների ցուցակների կազմման համար: Այդ աշխատանքների կատարման համար ներգրավվեցին 11 ցուցակագրողներ: Ցուցակագրման ժամանակ կատարվեցին նաև սխեմատիկ հատակագծերի ճշգրտումներ: Փորձնական մարդահամարի ճիշտ կազմակերպման և բնակչության հաշվառման համընդգրկունությունն ապահովելու համար կազմվեցին կազմակերպական պլաններ, համաձայն որոնց ընտրված տարածքները ենթարկվեցին մարդահամարային շրջանացման, այսինքն՝ դրանք բաժանվեցին մարդահամարային, հրահանգչական և հաշվային տեղամասերի: Արդյունքում ստեղծվեցին 3 մարդահամարային, 22 հրահանգչական, 106 հաշվային տեղամասեր: Համապատասխանաբար ներգրավվեցին ժամանակավոր աշխատողներ, որոնք անցան «Մարդահամարն անցկացնելու և մարդահամարի հարցաթերթերը լրացնելու կարգի մասին» հրահանգի և մարդահամարային այլ փաստաթղթերի ուսուցում-հրահանգավորում:

Փորձնական մարդահամարի ծրագրում նախատեսվեց համատարած հաշվառման համար 27, իսկ ժամանակավոր գտնվողների համար՝ 10 հարց:

Փորձնական մարդահամարի ժամանակ, մարդկանց հաշվառումն իրականացնելու նպատակով, կիրառվեցին երեք հարցաթերթեր՝ ՁԼ 1-Ա, ՁԼ 1-Բ, ՁԼ1-Ժ: Ընդ որում, 1-Ա և 1-Բ հարցա-թերթերը պարունակում էին նույն հարցերը, բայց տարբերվում էին արտաքին ձևավորմամբ: 1-Ա հարցաթերթը բաղկացած էր 8 թերթից և նախատեսված էր տնային տնտեսության 7 անձի համար (յուրաքանչյուր թերթ մեկ անձի համար): Իսկ 1-Բ հարցաթերթը կազմված էր մեկ

For provision of accurate organization and complete count the organizational plans were created according to which the chosen territories were devided into census, supervisory and enumeration areas. In the result, there created three Census, 22 supervisory, 106 enumeration areas. Accordingly, temporary workers were recruited and trained on the manual "About the rules of Census organization and filling in the questionnaires" and other necessary documentations.

27 questions were foreseen for the overall count and 10 questions -for temporary present population in the Census program.

During the Pilot Census, 3 questionnaires were practiced for the population count _ form 1A, form 1B, form 1G. The form 1A and form 1B included the same questions; just they differed by their outward form. The questionnaire 1A consisted of 8 pages and was envisaged for the household of seven members (each paper for one person). And the questionnaire 1B consisted of one page envisaged for the household of all the seven members. 1G questionnaire was filled in for the temporary present person. In Kanaker-Zeitun quarter of city Yerevan and in 5 villages of Ararat Marz there was practiced the questionnaire 1B and in city Vedi _ the questionnaire 1A. In the result of the Pilot Census the privilege was given to the questionnaire 1B as it required less expenses, and was more suitable for the further data processing (coding and keying).

In 1997 five coding manuals were prepared and practiced which were necessary for coding the textual answers of the questionnaire . These were questions about thr place of birth, ethnicity, native and foreign languages, place of work, speciality and occupation .

The mentioned coding manuals were: 1)residences of the Republic of Armenia, 2)countries, languages and nationalities, 3)occupations, 4)professions, 5)places of work.

All the manuals had been prepared in the Census Department. A special manual on the logical editing of coding and answers was produced as well. The aim of checking was to cor-

городов и больших деревень (5000 и более жителей), о подготовке карт марзов и районов. Для подготовки к пробной переписи населения в первую очередь были получены схематические планы части общины Канакер – Зейтун г. Еревана и г. Веди для составления списков домов. Для выполнения этой работы были вовлечены 11 регистраторов. Во время регистрации домов были выполнены также уточнения схематических планов.

Для обеспечения правильной организации пробной переписи населения и обеспечение охвата учета населения были составлены огранизационные планы, согласно которым выборочные территории подверглись переписному районированию, т. е. они были разделены на переписные, инструкторские и счетные участки. В результате были созданы 3 переписных, 22 инструкторских и 106 счетных участков. Соответственно были охвачены временные работники, которые прошли инструкцию. "О проведении переписи населения и порядке заполнения опросных листов переписи населения"- и других документов изучение-инструктаж переписи населения.

В программе пробной переписи населения были предусмотрены для всеобщей регистрации 27, а для временно находящихся -10 вопросов.

Во время пробной переписи населения с целью осуществления регистрации людей, использовались 3 опросных листа: форма 1-А, 1-Б, 1-Ж, Листы формы 1-А и 1-Б содержали в себе одни и те же вопросы, но отличались внешним оформлением. Опросный лист формы 1-А состоял из 8 листов и предусмотрен был для домашнего хозяйста, имеющего 7 членов (каждый лист был для одного лица). А опросный лист формы 1-Б был для всех 7 членов домашнего хозяйста. Опросный лист формы 1-Ж заполнялся для временно находившегося лица. В общине Канакер-Зейтун г. Ереван и в 5-и селах Араратского марза был применен опросный лист 1-Б, а в г.Веди-опросный лист 1-А. В результате пробной переписи населения предпочтения были даны листу

թերթից և նախատեսված էր տնային տնտեսության բոլոր 7 անձերի համար: 1-Ժ հարցաթերթը լրացվում էր ժամանակավոր գտնվողի համար: Երևանի Քանաքեռ-Զեյթուն թաղամասում և Արարատի մարզի 5 գյուղերում կիրառվեց 1-Բ հարցաթերթը, իսկ Վեդի քաղաքում՝ 1-Ա հարցաթերթը: Փորձնական մարդա համարի արդյունքում առավելությունը տրվեց 1-Բ հարցաթերթին, քանի որ այն ավելի քիչ ծախսեր էր պահանջում և հետագա մշակման (կոդավորում և մուտքագրում) համար ավելի հարմար էր:

1997թ. փորձնական մարդահամարի հարցաշարին համապատասխան մշակվեցին և կիրառվեցին կոդավորման 5 ձեռնարկներ, որոնք անհրաժեշտ էին հարցաթերթի տեքստային պատասխանների կոդավորման համար: Դրանք էին ծննդավայրի, ազգության, մայրենի և օտար լեզուների, աշխատանքի վայրի, մասնագիտության (ըստ աշխատանքի) և զբաղմունքի հարցերը: Կոդավորման նշված ձեռնարկներն էին.

- ՀՀ բնակավայրերի,
- երկրների, լեզուների և ազգությունների,
- զբաղմունքների,
- մասնագիտությունների,
- աշխատատեղի:

Բոլոր ձեռնարկները մշակվել էին մարդահամարի վարչությունում: Մշակվեց նաև կոդավորման և պատասխանների տրամաբանական ստուգման համար հատուկ հրահանգ: Ստուգման աշխատանքների նպատակը կայանում էր նրանում, որ ուղղվեն կամ վերականգնվեն հարցաթերթերի լրացման ժամանակ հաշվարարների կողմից թույլ տրված տրամաբանական անճշտությունները և բաց թողնված պատասխանները: Կոդավորման-ստուգման աշխատանքներն իրականացնելու նպատակով ընդունվեցին 25 ժամանակավոր աշխատողներ՝ կոդավորող-ստուգողներ: Կոդավորող-ստուգողների հրահանգավորումը և կոդավորման-ստուգման աշխատանքներն իրականացվեցին ապակենտրոնացված կարգով Երևան և Արտաշատ քաղաքներում՝ Քանաքեռ-Զեյթուն թաղամասինը՝ Երևանում (10 մարդ), իսկ Արարատի մարզինը՝ Արտաշատ քաղաքում (15 մարդ):

rect the logical mistakes and the missed answers made by the enumerators during the filling the questionnaires. 25 temporary workers were recruited – to realize the works of decoding-checking. This action was carried out decentralized, in Yerevan and in city Artashat. The works of Kanaker-Zeitun quarter - in Yerevan (10 people) and the works of Ararat Marz – in city Artashat (15 people)).

After the end of coding-checking process data entry (keying) of the census data commenced. During the Pilot Census of 1997 for the tasks of data entry and automatic (computerized) logical editing and correction, the software program IMPS 3.1, provided by the International Programs Center of the United States Census Bureau (BUCEN) was used, and for the output tables their IMPS 4.1 program was used.

For the census data keying of the Pilot Census two programs were prepared, the first one for questionnaires 1A and 1G, and the second one for 1B and 1G, in order to choose the more appropriate version during keying . In the end, the privilege was given to the second version. Data entry of the Pilot Census was decentralized, run in Yerevan and in Artashat

For the Census data keying of the Pilot Census 2 programs were prepared, the first one for the questionnaires of 1A, 1G and the second one-for 1B, 1G, in order to chose the more appropriate version during keying . In the end the privilege was given to the second version. The works of data keying of Pilot Census were also organized decentralized - in Yerevan and in Artashat.

After data entry was completed, the program for automated editing was run, and an error report was generated flagging inconsistencies in the data. However, rather than allowing the automated program to correct these inconsistencies, the report was given to a coder who manually reviewed it and marked on the report how how to correct the data. The report was then given to a keyer who entered in the corrected values into the database. This process was repeated until no mistakes were found. This method had its

формы 1-Б, т. к. она требовала меньше затрат и была более удобной для последующей обработки (кодирование, ввод данных)

Соответственно вопросника пробной переписи 1997г. были обработаны и использованы 5 пособий кодирования, которые были необходимы для кодирования текстовых ответов. Это были вопросы: место рождения, национальность, родной и иностранный язык, место работы, специальность (по месту работы) и занятие.

Указанные пособия по кодированию были:

- Населенные пункты РА.
- Стран, языков и национальностей.
- Занятий.
- Специальности.
- Месту работы.

Все пособия были обработаны в управлении переписи населения. Была обработана также специальная инструкция для логической проверки и кодирования ответов. Цель проверяемых работ была в том, чтобы исправлялись или восстановливались допущенные счетчиками во время заполнения переписных листов логические неточности и пропущенные ответы. С целью осуществления кодирования – проверки были приняты 25 временных работников- кодировщиков - проверяющих. Инструктаж кодировщиков проверяющих и работы по проверке кодирования-работники осуществили рассредотачиванием в г. Ереван и Арташат. В квартале Канакер – Зейтун г. Ереван (10 чело-век), а в г. Арташате марза Арарат (15 человек).

По окончании работ кодирования-проверки началась работа ввода данных переписи населения. Во время ипытательной переписи населения 1997г. заприходывания материалов переписи населения, механического контроля получения протокола ошибок был применен программный пакет IMPS 3.1., предоставленный Центром бюро учета международных программ (BUCEN) департамента торговли США, а для получения исходных таблиц пакет IMPS 4.1.

Կոդավորման-ստուգման աշխատանքների ավարտից հետո սկսվեցին մարդահամարի նյութերի մուտքագրման աշխատանքները: 1997թ. փորձնական մարդահամարի ժամանակ մարդահամարի տվյալների մուտքագրման, մեքենայական տրամաբանական հսկման և սխալների արձանագրությունների ստացման ծրագրերի համար կիրառվեց ԱՄՆ-ի Առևտրի դեպարտամենտի հաշվառումների բյուրոյի միջազգային ծրագրերի կենտրոնի՝ (BUCEN)-ի կողմից տրամադրված IMPS 3.1 ծրագրային փաթեթը, իսկ ելքային աղյուսակների ստացման համար՝ IMPS 4.1 փաթեթը:

Փորձնական մարդահամարի տվյալների մուտքագրման համար գրվեց մուտքի երկու ծրագիր՝ առաջինը 1-Ա և 1-Ժ, իսկ երկրորդը 1-Բ և 1-Ժ հարցաթերթերի համար՝ տվյալների մուտքագրման ժամանակ առավել հարմար տարբերակ ընտրելու նպատակով: Արդյունքում առավելությունը տրվեց տվյալների մուտքագրման ծրագրի երկրորդ տարբերակին: Փորձնական մարդահամարի մուտքագրրման աշխատանքները ևս կազմակերպվեցին ապակենտրոնացված՝ մի մասը անցկացվեց Երևան քաղաքում, մյուսը՝ Արտաշատ քաղաքում:

Փորձնական մարդահամարի ժամանակ տեղեկատվությունը կուտակվեց սերվերներում՝ ցանցի միջոցով, իսկ մարզերի սերվերներից կենտրոնական սերվեր տեղափոխվեց մագնիսական կրիչների միջոցով:

Յուրաքանչյուր պայուսակի մուտքագրումից հետո տրամաբանական հսկման ծրագիրը տալիս էր սխալների արձանագրություն, որը հանձնվում էր կոդավորողին՝ տրամաբանական կապերի համաձայն սխալները ուղղելու համար: Կոդավորողի կողմից սխալներն ուղղելուց հետո արձանագրությունը վերադարձվում էր մուտքագրման: Մուտքագրողը ուղղումները մուտքագրում էր համակարգիչ: Փուլը կրկնվում էր այնքան, մինչև սխալների արձանագրությունը ոչ մի սխալ չէր պարունակում: Գործընթացն ուներ իր բացասական կողմերը, քանի որ տալիս էր թղթի մեծ կորուստ, աշխատատար էր և անխուսափելի էր կոդավորողների կողմից սխալների ճշգրտման սուբյեկտիվ կամ ոչ միանշանակ մոտեցումը: Այս

drawbacks, as it caused a great loss of paper, created a lot of work, and led to the inevitable subjective opinions of the individual coders. Had it been decided within the program how to correct the data, changes would have been applied much more consistently and far more quickly and efficiently. (This fully-automated method of correction was used for correcting the 2001 census results.)

The next was the process of producing of output tables. Both IMPS 4.1 Cross tab Microsoft Access program were applied for this work. 45 output tables were produced by the pilot census results.

Для ввода данных пробной переписи населения были написаны две программы ввода: первая для переписных листов 1-А и 1-Ж, а вторая 1-Б и 1-Ж с целью выбора наиболее удобного варианта. В результате предпочтение было дано второму варианту программы ввода данных . Работу ввода данных пробной переписи населения организовали также рассредоточенно: одна часть была проведена в г. Ереване, другая- в г. Арташате.

Во время пробной переписи информация накопилась в сервере посредством сети, из марзовых серверов в центральный сервер перевели посредством магнитных носителей.

После ввода данных каждой сумки программа логического контроля дает протокол ошибок, который согласно логическим связям сдается кодировщику, для исправления ошибок. После исправления кодировщиками ошибок протокол возвращался вводу. Оператор вводил поправки в компьютер. Фраза повторяестя до тех пор, пока протокол ошибок не содержит ни одной ошибки. Но подобная работа имела свои отрицательные стороны: она давала большую потерю бумаги, была трудоемкой и был неизбежен субъективный или неоднозначный подход со стороны кодировщика при уточнении ошибок. Таким способом очистилась база данных пробной переписи населения. Это значило, что она не содержала в себе логических ошибок.

Следующий этап-этап получения исходных таблиц.

Для получения исходных таблиц были применены программы IMPS 4.1. Crosstab и Microsoft Access. В результате пробной переписи населения получены 45 исходных таблиц.

եղանակով մաքրվեց փորձնական մարդահամարի տվյալների բազան: Դա նշանակում էր, որ այն այլևս չէր պարունակում տրամաբանական և այլ կարգի սխալներ:

Հաջորդը ելքային աղյուսակների ստացման փուլն էր: Ելքային աղյուսակների ստացման համար կիրառվեցին IMPS 4.1 Crosstab և Microsoft Access ծրագրերը: Փորձնական մարդահամարի արդյունքներով ստացվեցին 45 ելքային աղյուսակներ: